




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

-328-

Կ-100/12

Վ.Լ. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ

ԿՐՈՆԸ ՈՊԻՈՒՄ Ե

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ 1931

1/2 211
Վ.Լ. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ

328
ԿՐՈՆԸ ՈՊԻՈՒՄ Ե

ՊԵՏԶՐԱՑ

1931

ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԳ. № 1784
ԳԼԱՎԼԵՏ 8704(Բ)
ՊԱՏՎԵՐ 4282
ՏԻՐԱԺ 6000



1-25409p

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս չափ փոքրիկ և հանրամատչելի գրքույկի մեջ
խոսքը միայն մեկ բանի մասին է—կրոնի՝ վերապես
ուղիումի (ափիտնի) և ցլիի մասին։ Յեռ աշխտեղ բոլո-
րովին չեմ շոշափում կրոնի դասակարգային դերը—
նրա հանրածանոթ հակահեղափոխական դերը, յես չեմ
խոսում նույնպես այն մասին, թե ինչպես կուլակը,
տերտերը և սոցիալիզմի մյուս մահաշունչ թշնամիները
լախորեն սպառնալուքում են կրոնը սոցիալիստական չի-
նարարության դեմ պայքար մղելու համար, դիտավոր-
յալ կերպով բորբոքում են աշխատավորների կրոնական
զգացմունքները, վերապաղի իրենց հետեվից տանեն նը-
րանց՝ ընդդեմ Ոորհուրդների իշխանության, ընդ-
դեմ պրոլետարիատի և կոմունիստական կուսակցու-
թյան։

Այս գրքույկի մեջ յես սահմանափակվում եմ մեր
մեծ ուսուցիչ Մարքսի խոսքերի լուսարանությամբ այն
մասին, վոր կրոնը—ճնշված աշխարհի հառաչանքն
է, տարածամթության վոգի, անտիրտ աշխարհի հողին,
կրոնը—սպիտակ է։

Մարքսի այդ խոսքերը պետք է մինչև վերջը հաս-
կանալ, համոզվել, թե վորքան ճշմարիտ են նրանք,
թե վորքան խորիմաստ են նրանք։

Բոլոր բուրժուական պետութիւնների մեջ աշխա-
տավորների զրությունը տարեց-տարի վատթարանում
է, կյանքն աշխտեղ հետզհետե ավելի անտանելի յե
դառնում, աշխատավորների համար աշխտեղ ժամանա-

կը անդուլ-անդադար աղետաբեր աշխատանք ե, կապի-
տալիստական աշխարհը նրանց համար խոսկական ան-
սիրտ աշխարհ ե: Կապիտալիստական և դադուլթային
յերկրները տասնյակ միլիոնավոր գործազուրկ բանվոր-
ներին և նրանց կանանց, միլիոնավոր քայքայվող և
քայքայված գյուղացիներին կապիտալիստներն ու կա-
վածատերերը՝ «ճնշված արարածները» դուրթյան մեջն
են դրել: Յերբ Մարքսը գրում եր կրոնի մասին, վոր-
պես ճնշված արարածի հառաչանքի մասին, ամբողջ
աշխարհը կալվածատերերի և կապիտալիստների իշխա-
նության տակն եր գտնվում: Մարքսի այդ խոսքերը
ճիշտ են մինչեւ այժմ եւ կապիտալիստական յերկրների
համար:

Բոլորովին այլ ե աշխատավորները դուրթյունը
ԽՍՀՄ, աշխարհում աշխատավորների այդ միակ հա-
րենիքում:

Վոչ մի «տարածամության վոգու» մասին խոսք
լինել չի կարող այն բանվորների, կոլտնտեսականների
և չքավորների ու մեջակների համար, վորոնք մարդ-
կության ամբողջ պատմության ընթացքում առաջին
անգամ սեփական ձեռքերով սոցիալիստական կյանք
են կերտում յերկրագնդի մեկ վեցերորդ մասի տերրի-
տորիայում: Աշխարհը Խորհուրդների Յերկրում ան-
սիրտ ե միայն չահագործող դասակարգերի բեկորների
համար—կուլակների և նեպոմանների համար, նախկին
մարդկանց համար:

Սակայն ամենևին հազվագյուտ չեն այնպիսի դեպ-
քեր, յերբ ինքն իրեն այն մասին հաշիվ տվող աշխա-
տավոր մարդը, թե իրոք սոցիալիզմ ե կառուցվում, թե
մեր դժվարությունները, վորոնք արտահայտվում են

մեքենաների, մետաղի, արդյունաբերական ապրանքնե-
րի, յուղի և նման բաների պակասությամբ, աճման
դժվարություններ են հանդիսանում և սոցիալիստական
շինարարության պրոցեսում վերանում են և համեմա-
տաբար կարճ ժամանակում վերջնականապես հաղթա-
հարվելու յեն, — այդ ամենի մասին ինքն իրեն հաշիվ
տալիս, նա այդ դժվարությունների դրոհի ալդեցու-
թյան տակ անձնատուր ե լինում լքման, կորցնում ե
մերձավոր ապագան տեսնելու ընդունակությունը, մո-
ռանում ե այն դժվարությունների մասին, վորոնք ա-
վելի խոշոր եյին և վսրոնք այնուամենայնիվ հաղթա-
հարվեցին: Այդպիսի մոմենտում այդ հավատացյալ աշ-
խատավորներին աշխարհն անսիրտ ե թվում:

Կապիտալիստական յերկրներում աշխարհն աշխա-
տավորների համար իրաք վոր անսիրտ ե, իսկ ԽՍՀՄ
նա այդպես միայն քվում ե, և այն եւ վոչ թե աշխա-
տավորներին ամբողջությամբ, այլ առանձին խմբե-
րին և անձերին առանձին մոմենտներում:

«Կորնը ուղիւմ ե» թեմայով ղեկուցումներ անելիս՝
յես հանդիպում եյի այնպիսի տոմսերի, վորոնց մեջ
հարցնում են. «Միթե՞ կրոնի արժատները միայն
կյանքի դժվարությունների մեջն են»: Ուստի, յես
հենց սկզբից կկամենայի շեշտել, վոր յես այս դըր-
քույկում բնավ չեմ խոսում կրոնի արժատների մասին:
Յես նպատակ եմ դնում ցույց տալ միայն մի բան, այն
ե՝ վոր կյանքի դանապան դժվարությունները զորեղա-
ցնում, բարձրացնում են կրոնականությունը: Ազան-
դավորներն իրենց ամբողջ ազիտացիայով առանձին ան-
ձերի մօտ են գնում, ջանալով այնպիսի մոմենտ ըն-
տրել, յերբ այդ անձերին վորեւե դժբախտություն ե
պատահել:

Մենք՝ հակակրօնականներս դիտենք այդ, ուստի և մեր աշխատանքում ջանք ենք անում համոզել հավատացյալ աշխատավորներին այն բանում, վոր դժվարությունները հաղթահարվում են հենց իրենց աշխատավորների՝ պլանային կազմակերպված դործողություններով, այնպիսի դործողություններով, վորոնք ուղղված են դեպի սոցիալիզմի ամենաարագ կառուցումը: Չկան այնպիսի դժվարություններ, վորոնց արմատները գտնվելիս չլինեն նույն ինքն հասարակական կյանքի մեջ: Նրա սոցիալիստական վերակառուցումը տանում է դեպի բոլոր դժվարությունների վերացումը, լինի նա բերքը մանդաղավ հնձելու ծանր աշխատանք կամ յերաշուխ անբերրիություն և այլն:

Կարեւոր է համարում ընթերցողին ասել նույնպես և այն, վոր այս գրքույկում խոսքը միայն հավատացյալ աշխատավորների մասին է: Այստեղ չէա բնավ չեմ չոչափում այն խնդիրները, թե ինչպես է ներդրածում կուլակի կամ նեպոմանի վրա այն ամենը, ինչ վոր հարվածում է նրանց:

ԿՐՈՆԸ ՈՊԻՈՒՄ Ե

Այդ՝ Մարքսն էր, վոր կրօնը ոպիումի հետ համեմատեց, իսկ Լենինը կրօնն անվանում էր և՛ ոպիում, և՛ ցքի և՛ չմեցուցիչ թույն: Ընթերցողների լայն մաստաներում այդ արտահայտությունը — «կրօնը ոպիում է» — հանրածանոթ է: Վոմանք ճիշտ են համարում այն, ուրիշները դաճում են, վոր չի կարելի կրօնը ոպիումի կամ ողու հետ համեմատել: Բայց՝ թե՛ մեկը և թե՛ մյուսները լսել են Մարքսի հուշակավոր արտահայտության մասին:

Բայց շատերն են արդյոք խորհրդածության յենթարկել այն: Շատերի՞ն արդյոք հասկանալի յե թե ինչո՞ւ Մարքսն ու Լենինը խոսում եյին կրօնի մասին վորպես ոպիումի մասին:

Մենք կարծում ենք, վոր շատ քչերին և հասկանալի: Մինչդեռ «կրօնը ոպիում է» արտահայտության մեջ կենսական խորունկ իմաստ է թաղնված, խորունկ և ակներեւ ճշմարտություն:

Ամենից առաջ հարց տանք մեզ՝ ոպիումն ի՞նչ է:

Դա մի այնպիսի դեղ է, վոր պատրաստում են լաւ խաշից՝ ծխելու համար: Դա մի առանձին թույն է, վոր ներգործում է մեր նյարդային համակարգության վրա, մեք ուղեղի վրա: Յեթե ոպիում չառ ծխես, կիսաանդիտակցական վիճակի մեջ կընկնես և դու յերապումդ ամեն ակաակ հաճելի բաներ կսկսես տեսնել:

Ոպիումի արբելու ծխողները կորած մարդիկ են,

յեթե չեն բժշկուած: Ոսկումը քայքայում է նրանց որ-
գանիւմը. այդ թուշը ծխողները արագորեն ծերանում
են, դառնում են կամաղուրկ, թուշ բնաւորութեան
տեղ մարդիկ, վորոնց մտքերն ուղղված են մի բանի վը-
րա, այն է՝ թե ինչպես անեն, վոր դարձյալ ծխեն:

Անգլիացիք դադութային մյուս զելատիչներէ հետ
միասին չինացի բանվորներէ մեջ ոսկում են տարա-
ծում, վարպետք ալիւի հետ լինի նրանց իրենց յեն-
թարկել և նրանցից ել' ալիւի յեկամուտ դուրս քա-
շել: XIX-րդ դարի կեսերում Անգլիան Չինաստանի հետ
պատերազմում եր նրա համար, վոր Չինաստանը հրա-
ժարվեց թուշ տալ անգլիական ոսկումի ներմուծումը
իր յերկրում, վորով անգլիական քրիստոսաներ բուր-
ժուաշիան կործանում եր Չինաստանի աղաքանակչու-
թեանը: Այդ պատերազմները հենց այդպիս ել պատ-
մութեան մեջ մասն «ոսկումական պատերազմներ» ա-
նունով:

Ոսկումը շատ ծխողների հաճույք է պատճառում,
թեպետ և նրանց խորունկ և զժվար բուժելի վերքեր է
հասցնում: Այդ կողմից ոսկումը շատ նման է ալիւ-
հոլին: Ծառերն են նկատել, վոր հարբած մարդկանց
մեծ մասը սաստիկ աշխատում է համբուրվել իր հարե-
վանների հետ: Ողին, դարեջուրը, գինին և ընդհանրա-
պես ալիւհոլային խմիչքները խախտում են նյարդային
համակարգութեան կանոնավոր գործունեութունը,
մարդը սկսում է պատկերացնել իրեն աշխարհն այլ
կերպ, քան թե նա կա: Մինչեւ իսկ ամենազգլիւի դեմ-
քերը հարբեցողին հրապուրիչ են թվում, նա զրկարաց
և համբուրներով է զխում նրանց:

Հարբեցողութունը շատերի համար կյանքի դժ-
վարութեաններէ ինքնամոռացութեան տարու միջոց է:

Հարբեցողութունը նրանց հետ է քաշում իրական
լավագուշն կյանքի համար պայքարելուց, նա նրանց
դուրս է կորզում դասակարգային այն ընկերների շար-
քերից, վորոնք համառ պայքարով աշխատում են վերա-
ցնել զժվարութեանների պատճառները: Ողու միջոցով
թուլահամ մարդկանցից վոմանք իրենց համար յերե-
վակայական «լավագուշն» կյանքի պատկերներ են
ստեղծում:

Ընթերցողը գիտե, վոր շատերը՝ ինչպես ասում
են, «վշտից» են անձնատուր լինում հարբեցողութեան:
Դասակարգային, չհագործական հասարակութեան մեջ
աշխատավորների համար կենսական դաժան պայման-
ները նրանցից վոմանց կապիտալիստական ստրկութեան
դեմ, սոցիալիզմի համար պայքարող մարտիկների շար-
քերի մեջն են դնում, իսկ վոմանց, անկայուններին, ա-
վելի թուշերին, դասակարգայնորեն անգլխակիցներին
ինքնասպանութեան են դրդում (իսկ ինքնասպանու-
թեաններն այժմ՝ անտեսական սուր ճգնաժամի կա-
պակցութեամբ, շատ հաճախակի յերեւոյթ են դարձել
բոլոր բուրժուական պետութեաններէ մեջ, վորտեղ
գործադուրկների բազմամիլիոն բանակներ կան) կամ
ողեւունն են նետում:

ՈՍՀՄ-ում խմում են հին սովորութեամբ, հին
կենցաղի ճնշման տակ, ընկնելով կուլակային ցանցի
մեջ, յենթարկվելով դեռեւս չվերացված զժվարու-
թեանների հարվածներին, խմում են ամեն քայլափո-
խում այն մարդիկ, վորոնք իրենց համար ամենալի-
կյանք ստեղծելու մեջ հուսալքված են ու չեն հստկա-
ցել դեռ, թե իրենց անձնական կյանքի զժվարութեան-
ները կարող են հաղթահարվել միայն ամբողջ հասա-
րակութեան սոցիալիստական վերակառուցման համար:

մղվող պայքարով: Մենք դիտենք, վոր շատերը ուղիւմ են ծխում և ողի խմում ճաշակի զգացողութեան համար: Մեզ հայտնի յե, վոր ալիոհոլը տարածված ե վոչ միայն չքավորների մեջ, այլև կապիտալիստների, կուլակների, հարուստ շինովնիկների, լավ վաստակ ունեցող ինտելիգենցիայի մեջ:

Մենք ամենեւին չենք ուզում ասել, իհարկե, վոր ալիոհոլը կենսական դժվարութիւնների յերեսից ինքնամոռացութեան տալու միջոց ե և ուրիշ վոչինչ: Վոչ. նրանից ոգտւում են նաև վորպես բուժական միջոցից և վորպես մի մթերքից, վորը շատերի համար ճաշակ պարարող հաճելի զգացողութիւններ ե բերում և այլն: Սակայն, ալիոհոլը նաև հարբեցնում ե, իրական կյանքից վերացնում ե և տանում դեպի յերեւակայական աշխարհը, այդ իսկ պատճառով ել հաճախ հարբեցողութեան են դիմում տանջված մարդիկը:

Վշտից հարբեց: Այդպես հաճախ ե լինում: Այդ հատկութիւնը ողին ցեղակից ե դարձնում ուղիւմի հետ:

Բայց այստեղ ի՞նչ գործ ունի կրօնը—կհարցնեն մեզ անհամբեր ընթերցողներէջ վոմանք: Նույնիսկ շատ գործ:

Պլեխանովը մեկ անգամ կրօնն անվանեց հոգեջնուույց (հոգի տաքացնող) և այդ համեմատութեան մեջ շատ ճշմարտութիւն կա:

Հոգի ասելով տերտերները աստվածային վոգու մասնիկ են հասկանում, վոր աստված վիչեց Աշտմի յերեսին նրան ստեղծելիս: Ըստ կրօնական ուսմունքի, հոգին ե կառավարում մարդկային մարմինը: Իսկ մենք ասում ենք, վոր այդ բառի տերտերական իմաստով վոչ մի հոգի գոյութիւն չունի և յերբ գործ ենք անում

«հոգի» բառը, ասա դրա տակ հասկանում ենք, մարմնի հատկութիւնը զգալու, մտածելու, դանազան տրամադրութիւններ վերապրելու— սիրո, դժութեան, ատելութեան, քաջութեան, յերկշտութեան և նման տրամադրութիւններ: Լինում են այնպիսի վիճակներ, յերբ մարդ զվարթ ե, ուրախ, հաճույք ե գգում ապրելու, շարժվելու, աշխատելու, խմելու, ուտելու: Լինում են և ուրիշ վիճակներ, յերբ մարդ իբեն ճնշված, թույլ ալաբկոտ, թախծոտ ե գգում: Լայն մասսաներում այնպիսի արտահայտութիւն ե տարածված. «Հոգին սառեց», «հոգին թալկանում ե»:

Ահա հենց այդ ապրումներն եյին (հոգեկան վիճակներ), վոր ինկատի ուներ Պլեխանովը, յերբ կրօնն անվանում եր «հոգեջնուույց»:

Որինակի համար հաժապեցալ մարդուն վերցնենք: Մենք բոլորս ել դիտենք, վոր յերբ հաժապեցալ մարդը լավ ե ապրում, նա այնքան ել մոլեռանդորեն չի աղոթում աստծուն: Նա չի շտապում պատարագի կամ դիչերային հսկման գնալ. յեկեղեցում նա դրույց ե տնում իր հարեանի հետ, նա սոլելի շատ յերգեցողութիւնն ե լսում և հետեւում տերտերին ու տիրացուին թե ինչպես են նրանք սպասավորում, քան թե աղոթում ե: Յերբ ժամերգութիւնն աւարտված ե, այդ հաժապեցալ մարդն ուրախ ե, վոր այժմ կարելի յե նաև փողոց դուրս գալ, հարեւանների հետ զանազան բաների մասին մի քիչ խոսել, արեւի առջեւ տաքանալ: Այդ մարդու կրօնական զգացմունքը փոքր չափով իսկ բարձրացած չե, նա ընդունակ չե հանուն կրօնի վոչ մեծ գործեր կատարել, վոչ մեծ զոհարելութիւններ անել:

Յեւ վ այդ միանգամայն պարզ ե:

Չե՞ վոր յերբ հաժապեցալ մարդը աղոթում ե, նա

միշտ վորեւէ բան ե խնդրում ե շատ հաղվադեպ ե , վոր շնորհակալություն ե հայտնում աստծուն : Կրօնա-
կան բոլոր ծեսերն ու բոլոր աղոթքները խնդրանքներով
են լեցուն :

Յեկեղեցիներում ամենից ավելի հաճախ յերգում
են — «Տո՛ւր մեզ, տե՛ր» :

Յեթե հավատացյալ մարդը մոմ ե վառում , նա վոր-
եւե բան ե խնդրում : Աստված անձրե՛ւ տուր : Տե՛ր աս-
տված , իմ թոռնիկին առողջությո՛ւն տուր : Տե՛ր աստ-
ված , լավ դնո՛րդ տուր : Տե՛ր աստված , մորեխը մեզ-
նից հեռո՛ւ տար :

Յեթե տերտերը հոգեհանգիստ ե կատարում , հա-
վատացյալ մարդը խնդրում ե — տե՛ր աստված , թող
հանգուցյալի հոգին դարստ ընկնի :

Յեթե տերտերը մաղթանք ե կարդում , միյեմնույնե
ե՝ խնդրանքներ են մատուցվում բերքի մասին , անձրե-
ւի մասին , դաշտային վնասատուների վռնջացման մա-
սին ե ուրիշ շատ բաների մասին :

Յեւ ահա յերբ կյանքն ընթանում ե իր կարգով ,
սուանց վորեւե նշանակալից ցնցումների , — այդ ժամա-
նակ հավատացյալ մարդը աստծուն շատ քիչ ե հիշում ,
իր յերեսը սովորության ույժով ե խաչակնքում ե
կանթեղն ել ավելորդ անգամ չի վառում :

Այժմ արդեն Կոլտնտեսականը , թեպետե կոլտնտե-
սությունները դեռ շատ յերիտասարդ են , անհատակա-
նից , չքավորից ե միջակից ավելի լավ ե ապրում : Կոլ-
տնտեսությունների մեջ ամեն մի մարդուն ավելի ցան-
քադաշտ , ավելի հաց , կաթ , ձու յի ընկնում . կոլտն-
տեսությունների մեջ աշխատանքն ավելի դյուրին ե ,
վորովհետեւ աշխատանքի բաժանում ե տարվում , տա-
րեց տարի ավելի շատ տրակտորներ ե մեքենաներ են

գործադրվում : Կյանքը կոլտնտեսություններում ավելի
լավ ե ե այդ բանը գլխավոր պատճառներից մեկն ե ,
վոր անաստվածությունը կոլտնտեսականների մեջ բա-
վական արագությամբ ե աճում :

Իսկ անհատական չքավորի ե միջակի վիճակը շատ
ավելի ծանր ե ե ահա յերբ հավատացող մարդու ձեռ-
քիցը բան չի գալիս , տնտեսության մեջ մեկ ձախոր-
դությանը հաջորդում ե մյուսը , տարերային աղետ-
ները շատ ավելի սուր են զգացվում , ինքը հիվան-
դանում ե , յերեսաները պառկած են բարձր տաքության
մեջ , — այդ ժամանակ հավատացյալ մարդը հաճախ
միտն ե բերում աստծուն , սովորականից ավելի ջերմե-
ռանդորեն ե աղոթում ե շարունակ խնդրում ե նրան ,
վորպեսզի իր գործերը կարգի ընկնեն , հիվանդու-
թյուններն անցնեն ե ե՛լ ինչ ասես վոր չի խնդրում այդ
ժամանակ իր աստծուց հավատացյալ մարդը :

Նա կորցրեց հույսն իր ուժերի վրա , նա իր վրա
ել հույս չի դնում ե դրա հետ միասին յեթե վոչ մի կող-
մից ողորդյուն չտեսնի (վորովհետե անհատական ձե-
ւով տնտեսություն վարելիս՝ նա ինքն իրեն ե հանձն-
ված) , նա անհույս վիճակի մեջ ե ընկնում : Իսկ այդ-
պիսի անհույս վիճակի մեջ ե դնում կապիտալիստական
հասարակարդը ամեն մի քայլափոխում աշխատա-
վորների քաղաքականապես հետամնաց մասին ե արդ-
պատճառով այստեղ կրոնը հատուտապես ե ամրանում
դյուրացիական չքավորների ե բանվոր դասակարգի հե-
տամնաց խավերի գիտակցության մեջ : Կրոնը հու-
սահատված հավատացյալ մարդանց համար այստեղ
ծառայում ե վորպես հոգեջնուլյց , սիովանք , վրա հա-
սած ձախորդություններից , իրականությունից հեռու
մնալու միջոց : Հավատացյալ մարդը մի փոքր աղոթեց

աստծուն կամ վորեւ սուրբի և նրան թվում է, կարծես թէ «հոգու ծանրութիւնը թեթեացավ»:

Կրօնը հոգեջեռույց է: Լավ եւ ասել Պլեխանովը: Բայց նա յեւ մատնանշել է և այն, վոր այդ հոգեջեռույցը միայն յերեութական է և այն եւ շատ վնասակար:

Եւ ավելի լավ, ավելի պարզ, ավելի ճիշտ և ավելի ուղիղ է Լենինի կրօնի համեմատութիւնը ցքիի (հացողի) հետ և Մարքսին՝ ուղիւմի հետ:

Յերբ կյանքը համատացյալ մարդկանց սեղմիչները մեջ է առնում, վոմանք դեպի ողետունն են վաղում, մյուսները դեպի յեկեղեցին:

Հարբեց—ինքն իրեն մոռացավ:

Աղոթեց—ինքն իրեն մոռացավ:

Ուղիւմ ծխեց—ինքն իրեն մոռացավ:

Բուրժուական հասարակութեան մեջ փոխանակ մյուս շահագործվողները հետ միասին պայքարելու լավագույն սոցիալական հասարակարգի համար, իսկ Խորհրդային պետութեան պայմաններում—փոխանակ բոլոր բանվոր դասակարգի հետը միասին ակտիվորեն մասնակցելու սոցիալիզմի շինարարութեանը, այս ու այն անդիտակից և թուլակամ համատացյալ մարդը պարզապէս աշխատում է մոռանալ իր և իր դասակարգային ընկերների դժվարին կացութիւնը և պայքարը սոցիալիզմի և փոխարինում: Այս բանում՝ ի միջի այլոց, կապիտալի համար կրօնի ոգտակար կողմերից մեկը կա, վորը հետո յե պահում ճնշված մասսաներին դասակարգային պայքարից:

Թե՛ ողին, թե՛ ուրիւմը, թե՛ կրօնը տարբեր կերպով են արտահայտում խմորների, ծխողների և աղոթողների տրամադրութիւնները, սակայն այդ բոլոր տրամադրու-

թիւնները մեջ ինչ—վոր մի ընդհանուր բան կա—հարբեցողութեան և կրօնին են դիմում նրանք, որքեր ուզում են մոռացութեան տալ իրենց կյանքի ճնշումներից, ովքեր կապիտալիստական հասարակարգի պայմաններում կապիտալի դեմ դասակարգային պայքար մղելուց փախչում են, ովքեր ԽՍՀՄ-ի պայմաններում սոցիալիզմի կառուցման համար, մեր առջև ծառացող դժվարութիւնների հաղթահարման համար մղվող պայքարը փոխարինում են անգոր մարմնով:

Կա մի այսպիսի թուշուն—ջայլամ: Նրա մասին ասում են, իբր, յերբ ջայլամին վորեւ սարսափելի վտանգ է սպառնում, նա գլուխը թևի տակն է թաղցնում:

Շատ կարելի յե, վոր այդ թուշունին թվում է, իբր թըշնամին նրան չի տեսնում, քանի վոր ինքը վոչինչ չի տեսնում: Յեւ ահա համատացյալ մարդը ջայլամին է նման: Վրա հասալ վորեւ դժվարութիւն թե չե, այդ մարդն եւ իր գլուխը տերտերի Փարաջայի տակը թաղցրեց—թերեւս վտանգը կողքով անցկացնի:

Համատացյալ մարդը հիշեցնում է նաև փոքրիկ յերեսային վորին մեկնումեկից հասել է այսինքն, թեկուզ հորից կամ ավագ յեղորից, և նա չտապում է իր տատիկի մոտ, թաղվում նրա չըջագեատի ծալքերի մեջ. տատիկը կոյի նրա գլուխը, մխիթարական առատ խոսքեր կասի, կանֆետ կդնի նրա բերանը և ահա յերեսան թեթեւութիւն և հաճուք զգաց, կարծես թե վոչ մի վիշտ եւ տեղի չի ունեցել: Հասակավոր համատացյալ յերեսան եւ—30 կամ 50 տարեկան—նույնպէս վազում է, բայց վոչ տատիկի մոտ, այլ վորեւ յերես յերանուհի, մեծ նահատակ Վառվառեյի սուրբ պատկերի մոտ և նա կարծես թե մխիթարում է նրան:

Մարքսն ասել է, վոր կրօնը ճնշված արարածի հա-

ռահանք ե, անտիրտ աշխարհի հողին, տարածամության վողին:

Այդ—զարմանալի կերպով ճիշտ ե: Դժվար ե ե՛լ ավելի կենսական վորոշում դանել, քան այն, ինչ վոր տվել ե Մարքսը*):

Ճիշտ այդպես՝ կրոնը ճնշված արարածի հառաչանքն ե:

Ինչ ե արարած՝ մարդու վերաբերմամբ դործադրելու լոճատով: Այդ այն մարդն ե, վոր դրկված ե արևի տակ տեղ ունենալուց: Այդ այն մարդն ե, վորը չի կարողացել տիրել կյանքին ե վորը նրանից ծանր հարվածներ ե ստանում, առանց հասկանալու, թե ինչու համար ե այդպես պատահում: Իսկ յերբ այդ մարդը բոլորովին դուրս ե հանված ախտից, նրան կարելի յե ճնշված արարած անվանել:

Բայց ինչպե՞ս հասկանանք—«մարդն իրեն համար տեղ չի գտել արևի տակ»: Նման հասկացողություն կարող եր ծագել միայն դատակարգային, չահադործական հասարակության մեջ:

Կալվածատիրական ե կապիտալիստական պետութայնների մեջ իշխանությունը գիշակեր—չահագործողների ձեռքումն ե դրսևում: Նրանց ձեռքերումն են հողը, Փարբիկաները, յերկաթուղիները, բանկերը: Բանվորներն ստիպված են կապիտալիստներին վաճառել իրենց բանվորական ուժը, իրենց գիտելիքները, իրենց փորձը, իսկ կապիտալիստը վճարում ե բանվորին միայն այն

*) Սակայն Մարքսի այդ խոսքերը մեկնելու՝ չի կարելի մի բույն մոռանալ, վոր այժմ յերկու աշխարհ դոյություն ունի—կապիտալիստական ե սոցիալիստական. Յերկրորդը՝ ՆՍՀՄ վերաբերութամբ, ինչպես վեր արդեն սոված ե առաջարկում, Մարքսի խոսքերը պետք ե բոլորովին ալ կերպ մեկնել:

քան, վոր նրա կյանքը պահպանվի: Կապիտալիստը չի վարանի իրեն համար ավելորդ բանվորին Փարբիկայի դարպասիցը դուրս շարտելու ե այժմ տասնյակ միլիոնավոր մարդիկ Յելրոպայում ե Ամերիկայում անգործ են չրջում, կիսաքաղց վիճակով ապրում, յերբեմն ել քաղցից մեռնում: Նրանց մեջ քիչ չեն այնպիսիները, վորոնք չեն հասկանում, վոր այդ դուրս յուսնից դուրս դալու յեղք կա ե վոր այդ յեղքը պրոլետարիատի դիլտատուրայի ե սոցիալիզմի համար պայքար մղելու մեջն ե: Ահա այդպիսի բանվորը—ձեռված ու անգիտակից—«ճնշված արարածի» վիճակն ունի. նույնը, իհարկե, չի կարելի ասել այն բանվորի նկատմամբ, վորը պայքարում ե չահագործական հասարակակարգի դեմ, թեկուզ նա լինի անգործ, առանց վատտակի, առանց բնակարանի:

Առանձնապես շատ են այդպիսի յբվածներ ե ճնշվածներ Ամերիկայի, Գերմանիայի, Ռուսիայի, Լեհաստանի, յուրաքանչյուր բարձուական յերկրի մանր գյուղացիութայն մեջ, վորտեղ կալվածատերերն ու կապիտալիստները շքավորներից քամելով դուրս են քաշում բոլոր հյուսիս, քայքայում են նրանց տնտեսությունները, յուրեմ նրանցից վերջին գույքը: Դրանցից նրանք, վորոնք անգիտակից են, վորոնք կառչում են իրենց սեփականութայն, վախենում են հեղափոխականներից ե սոցիալիզմից, —նրանք իրենց կյանքի առանձնապես ծանր մոմենտներում գզում են իրենց, Մարքսի խոսքերով ասած, «ճնշված արարած»:

Չենց կապիտալիզմով ճնշված մարդկային այդ մասսաների մեջ, վորոնք ակտիվ պայքարի չեն մտել կապիտալի ե կալվածատիրոջ դեմ, յեկեղեցին տուտ հունձ ե անում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ
1254098 17

Նույն իսկ ԽՍՀՄ-ում դեռ գոյություն ունեն կրոնականությունը անդող պայմաններ, վորչափով վոր չքավորների և միջակների անհատական տնտեսությունը չի ապահովում բարձր բերքատվություններ, կովերի լավ կիթ, չի ազատում ամեն տեսակի պատահականությունների ազդեցությունից, վորոնք քայքայիչ կերպով ներս են խուժում տնտեսության կյանքի մեջ, վորչափով դեռ գոյություն ունի կուլակները դատակարգը:

Իբրև ոլնակ վերցնենք միջակ-անհատականին, վորը, դեցուք, յերկրորդ կամ յերրորդ տարին և, ինչ բերք չի ստանում, յերկրորդ տարին և, ինչ դիչակները հափշտակում են հավաքներին, անասունները համար կեր չկա, կողմնակի վատակը քիչ և, մինչդեռ նրա տունը լիքն և յերեխաներով, վորոնք ուտելու բան են խնդրում, վորոնց պետք և մի կերպ հաղուստ և վորոնք անհատական հաղթել: Ահա այդ մարդը, յեթե նա անձնատուր և լինում կուլակային-տերտերական աղիտացիային և սիրտ չի անում կոլտնտեսություն մտնել, իրեն ճնշված վիճակումն և զգում և հառաչում և, իսկ այդ հառաչանքներն ազդեցություն են, յեթե նա հավատացյալ և:

Կրոնը ճնշված արարածի հառաչանքն և:

Այն, ով տեր, փրկիր և վորդումիր, — հառաչում և ճնշված արարածը, ուրիշ խոսքով ասած, այն հավատացյալ մարդը, վորին կյանքը սեղմիչի մեջն և առել և վորը յիւր չի տեսնում, չի հասկանում, վոր յիւրը սոցիալիզմի համար կոլեկտիվորեն պայքարելու մեջն և, այլ վոր թե գոյություն չունեցող աստվածների ոգնությունը դիմելու մեջ:

Ճնշված արարածի գրություն մեջ կարող և զգալ իրեն նաև վորեւե ծանր հիվանդ, վորին հետապնդում են

ցավերը և մտքերը՝ մեռնելու մասին: Յեւ նա աղոթում և Պանտեւեմոն — բուժողին, դանազան հիվանդությունների այդ «մասնագետին»: Թող ընթերցողը մի լավ վերհիշի, թե արդյոք շատ մոմեր են վառել Պանտեւեմոնին իր հարազատներն ու ծանոթները, յերբ նրանք առողջ էին և ընտանիքում վոր վոր հիվանդ չէր: Քիչ, շատ քիչ: Բայց ահա հենց վոր հիվանդությունն իր ճիւղանների մեջն և յերկում հավատացյալ մարդուն, նա իսկույն և յեթ հիշում և աստված-ասքավով յի արքունական ընկնի, նա աղոթում և Պանտեւեմոնին, նա մի աղիւրդ հինգ կամ տաս կողակի մոմ և վառում, նրա սուրբ հինգ կամ տաս կողակի մոմ և վառում, նրա սուրբ պատկերի առաջ մի աղիւրդ անգամ կանթեղ և վառում: Բաղական և վոր հիվանդությունն անցնի, վորի հետ վոր մի Պանտեւեմոն վոր մի առնչություն չունի, յերբ դոհացողական աղոթելից հետո նոր վոտքի յեւթ հիվանդը դադարի հիշել անգամ Պանտեւեմոնին:

Աստորախանում գլխավոր դադմունքը ձկնորսությունն և: Մինչ հեղափոխության ժամանակներում վոր մի մոտոր չկար. ծով էին դուրս դալիս առադաստավոր նավակներով. սառույցները նրանց ծովն էին քշում, վոր յորիկները ծովային անապատները շարտում քաղցի ու ցրտի մասնելով նրանց, չուռ էին տալիս նավակները և հարյուրավոր ձկնորսներ կորստի էին մատնվում: Վտանդավոր բան և այդ դադմունքը — ծովային ձկնորսությունը: Յեւ ահա, յերբ արշավում են վոր յորիկները, յերբ կանայք ու մայրեր անհանգստություն բեր լցվում ծովը դուրս յեւթ իրենց ամուսինների և վորդիկների համար, — միւլիկացի Նիկոլի սուրբ պատկերների առաջ բաղմաթիւ մոմեր են վառվում, վոր կաղերել են վախեցած կանայք, իսկ Աստորախանի գլխավոր յեկեղեղին — Նիկոլի յեկեղեղին — լցված և աղոթավորեն:

բով : Սակայն փոթորիկներն անցան , ձկնորսները վերա-
դարձան ,յամեն ինչ բարեհաջող և և միևնույն Նիկոլայից
յեկեղեցում կանգնած են միայն պառալներն ու աղքատ-
ները : Իսկ միլիկացի Նիկոլայը սուրբ և համարվում ,
վորը սգնում և բոլոր պանդուխտներին և ծովերի , գե-
տերի և լճերի վրա թափառողներին : Դա նախաստիական
և ձկնորսական սուրբ և :

Գյուղերում անասունների դանադան հիվանդու-
թյունների համաճարակի ժամանակ Վլասիտի անունով
մաղթանքներ են կատարվում ,վորին հավատացյալ մար-
դիկ համարում են անասնապահական սուրբ :

Յերբրցս յերանելի Վառվառե մեծ նահատակուհուն
են զխմում իրենց աղոթքներով այն մարդիկ , վորոնք ի-
րենց նահատակ են զլուծ , ճնշված արարածներ :

Աշխատավորները դարերով են աղոթում Նիկոլոնե-
րին , Վառվառեներին , Վլասիտներին , դարերով ել ի-
հարկե դրանից վոչ մի ողնություն չեն ստանում :

Ուշադրություն դարձրեք հետևյալ հետաքրքիր
փաստի վրա . այսպես կոչված «հայր» աստծուն սովո-
րաբար աղոթքներ չեն վերառաքում , նրա ասած մոմեր
չեն վառում : Ախր աստված-սարավովթը վոչ մի մաս-
նագիտություն չունի .հայտնի չե , թե ինչ պետք և խըն-
դրել հայր-աստծուց , իսկ յեթե մի բան չես խնդրի , ու-
րեմն չարժե վոր աղոթես :

Հաղպողյուտ և հանդիպել այնպիսի աղոթողի , վորը
մոմ վառի յերրորդության յերրորդ անձի—սուրբ հոգու
առաջ : Այդ վոգին նույնպես մասնագիտություն չունի ,
նրան նույնպես չդիտես թե ինչ խնդրես :

Բայց Նիկոլոները , Պանտելիմոնները , Վլասիտները ,
տասնյակ աստվածամայրերը ,—նրանք , հավատացյալ-
ների համոզմունքով , մասնագիտություն ունեն և հա-

մատացյալ մարդն աղոթում և այն սուրբին , վորը իր
կարծիքով , ընդունակ և դուրս հանելու նրան թշվառու-
թյունից , ողնելու նրան բարեկեցիկ կյանք ստեղծելու :

Կրոնը ճնշված արարածի հառաչանքն և :

Կոմունիստական հասարակության մեջ «նահատակ-
ներ» չեն լինի , կյանքը խնդալից կլինի , աշխատան-
քը—բարձր արտադրողական և թեթև , կոմունիստական
հասարակության մեջ կրոնի և Վառվառե մեծ նահատա-
կուհիների համար տեղ չի լինի :

Յեթե հիվանդներ չլինեյին և յեթե հիվանդները
միշտ ապահովված լինեյին բժշկական անհրաժեշտ ող-
նությամբ , Պանտելիմոնի շուրջառները վառված մո-
մերի լույսերը չեյին արտացոլի : Խորհրդային շինարա-
րությունն առողջապահության բնագավառում անխու-
սափելիորեն «գործողուրի» և դարձնում Պանտելիմո-
նին :

Յեթե ձկնորսի և նավաստու աշխատանքը դժվար
և վտանգավոր չլիներ , հին ժամանակներում Աստրախա-
նում և ուրիշ ծովափնյա քաղաքներում Նիկոլին նվիր-
ված յեկեղեցիներ չեյին կառուցվի : Ձկնորսական տըն-
տեսությունների կոլեկտիվացումը , ձկնարդունաբերու-
թյան մոտորացումը հարվածում են կրոնն ընդհանրա-
պես ու հավատն դեպի միլիկացի Նիկոլայը՝ մասնա-
վորապես :

Մարքան ասաց , թե կրոնը ճնշված արարածի հառա-
չանքն և , անսիրտ աշխարհի հոգին , տարածամություն
վոգին , կրոնը ոպիում և :

Պատահում և , վոր վորոշ դասակարգի հավատաց-
յալ մարդկանց համար աշխարհն առանձնապես անսիրտ
և պատկերանում : Այդ եպիստաներում հավատացյալները
շատ ավելի ջերմեռանդությամբ և անկեղծորեն են

աղոթում աստծուն, քան այն ժամանակ, յերբ աշխարհը նրանց սրտառատ ե թվում :

Վերցնենք թեկուզ Չինաստանը կամ Հնդկաստանը կամ Հնդկաչինը : Այդ յերկրները աշխատավորները հեծեծում են հայրենի իշխանիկների, կալվածատերերի, գեներալների և կապիտալիստների լծի տակ, Հնդկաստանում՝ անդլիական, Հնդկաչինում՝ ֆրանսական :

Աշխատավորներն այնպիսի դաժանությամբ են չահագործվում, վոր նրանց ձեռք բերածը նույնիսկ չի բավարարում նրանց կիսաքաղց դոյության :

Քաղցը, կեղտը, հիվանդությունները, մահը — ահա կապիտալիզմի այդ դոհների բաժինն ու վիճակը :

Նրանցից շատերի համար ներկա ժամանակը — դատարաժամություն է, իսկ աշխարհն՝ անսիրտ, մինչդեռ ուրիշներն արդեն սլաքբարում են խորհրդային իշխանության համար և բաղխվում են իրենց դասակարգային թշնամիների հետ, հասկանալով, վոր անսիրտ ե վոչ թե աշխարհն ընդհանրապես, այլ կալվածատիրական, կուլակային, կապիտալիստական շահագործության աշխարհը :

Կապիտալիզմի յերկրներում աշխարհն՝ անսիրտ ե սլատկերանում միլիոնավոր բանվորների և քայքայված գյուղացիների համար, մանավանդ ուժեղ ճգնաժամերի ժամանակ, ինչպես 1929—1931 թ.թ. ճգնաժամն է : Գործադրելության ծանրությունները, բնակարաններից վրտարումը, կիսաքաղց վիճակը, բանվոր դասակարգի մի մասի մեջ առաջ բերին հեղափոխական ալիքի վերելք, գործադուլային շարժում, մասսաների ակտիվ յեղուլթնիս Կոմինտերնի դրոշի տակը սլաքբարելու կապիտալիզմի դեմ, իսկ մյուս, դասակարգայնորեն ամենապախտ գիտակից յիր դասակարգի հետ ամենաքիչ դողված մասը

մեջ, — ինքնասլանությունների բարձր ալիք (Ամերիկայում, Ալատրիայում, Լեհաստանում, Վենգրիայում և մյուս յերկրներում) և կրոնական մի փոքր բարձրացում :

ՈՍՀՄ վոտը ե դրել սոցիալիզմի շրջանը. մեղնում գործադրելություն չկա, ապրելը հեշտանում ե և աշխարհը, Մարքսի արտահայտությունը գործադրելով, դառնում ե հետզհետե ավելի սրտառատ : Սակայն մեղնում ել կան դեռ նդովված անցյալի մնացորդներ, մենք մեր ճանապարհի վրա դեռ մի շարք դժվարությունների յենք հանդիպում, կապիտալիստական աշխարհը շարունակ սլատերադմով ե սղառնում մեզ, կուլակային դիմադրությունը սոցիալիստական հարձակմանը դեռ մեծ ե և այդ չափով կրոնի համար, նրան սնդոդ, ալքյուրներ կան : Քննության առնենք թեկուզ աղանդավորության աճման կապը գործադրելության հետ :

Ներկայումս աղանդավորները չեն կարող սլարծենալ հաջող աշխատանքով բանվորների մեջ : Ներկայումս շատ ել հեշտ չի բանվորներին ներդրալել աղանդի մեջ : Բայց ահա 1927 կամ 1928 թ., ընդհակառակը, աղանդալորական սլարագլուխները բանվորական մի քանի շրջաններում, մանավանդ բանվորների կանանց մեջ, վորոշ աղղեցություն ունեյին : Յեթե այդ յերեուլթի պատճառները ուսումնասիրենք, դժվար չի լինի սերտ կաղ դտնել կրոնականության դարգացման և դործադրելության աճման միջև :

1927 և 1928 թվականներին դեռ ուժեղ եր գործադրելությունը. շատ բանվորներ նստել եյին առանդ աշխատանքի և վաստակի. շատ բանվորների անհանգիստ մտքեր եյին ալեկոծում այն մասին, թե կարող են աշխատանքից զրկվել :

Ամենահետամնաց բանխորհրդերը (մանավանդ նրանց կանայք), նրանք՝ վորոնք դեռ հավատում են աստծուն, հետզհետե ավելի հաճախ ելին աղոթքով դիմում նրան աշխատանք ստանալու մասին, կյանքի թեթեւացման մասին և այլն: Աղանդավորական քարոզը նրանց մեջ արձագանք եր գտնում:

Իսկ այժմ արդյունաբերական բանխորհրդի մեջ գործադրվելով չկա. յուրաքանչյուր բանվոր, յեթե նա ավարա չէ, հարեցող չէ, վնասարար չէ, վտառ չէ, վոր իրեն գործից չեն հեռացնի, վոր ասանց վաստակի չի մնա և նույնիսկ հավատացյալ բանվորը աստծուն չի աղերսի աշխատանքը պահել նրա համար:

Իհարկէ, բանը միայն դործադրվելուն չէ: Մասսաների մեջ աճող հեռացումը կրոնից բացատրելիո՞ւ պեաք է հաշիւ անել մի ամբողջ շարք ուրիշ մոմենտներ—սոցիալիստական հարձակման ծախսովան ուժեղացումը, կուլտուրական հեղափոխութեան ծավալումը, կուլակութեան, վորպէս դասակարգի, վերացումը:

Կրոնը անխրտ աշխարհի հոգին է, նա տարածածութեան վողին է:

Յեւ յեթե իՍՂՄ, վոր հաջողութեամբ դարգացնում է իր սոցիալիստական արդյունաբերութիւնը և անհայտական գյուղը սոցիալիստականի, կորտնտեսականի յե վերածում, վերացնում է կուլակութիւնը՝ վորպէս դասակարգի, բարձրացնում է աշխատավորների կյանքի մակարդակը,—յեթե իՍՂՄ մի խնդրից, կայտաւ սոցիալիստական շինարարութեան յերկիր և հանդիսանում տանյակ միլիոնավոր բանվորների, կորտնտեսականների, չքավոր և միջակների համար, ուղա հետամնաց, քաղաքականապէս անգիտակից աշխատավորների առանձին խմբերի և անձերի համար, վորոնք դեռ

չեն գիտակցել թե ինչ է կատարվում մեր յերկրում, վորոնք չեն անցել ակտիւ պայքարի նոր աշխարհի կառուցման համար, նույնիսկ իՍՂՄ աղապիսիներին ժամանակ առ ժամանակ կյանքը անխրտ և թվում և նրանցից այն մարդիկ, վորոնք կրոնասեր են, աղապիսի մոմենտներում դիմում են աստծու և սրբերի «ողնութեան»:

Կալ ժամանակներում հավատացյալ մարդիկն ասում են՝ «հույսդ աստծու վրա դիր, բայց ինքդ անխույսթ մի լինիր»: Ասացվածքի առաջին կեսը կալ յոննի ձեռով է արտասանվում, առանց հատուկ վողեվորութեան, մինչդեռ յերկրորդ կեսի վրա—«ինքդ անխույսթ մի լինիր»—հիմնական շեշտ է դրվում:

Վատահալթյունը դեպի իր անձը, դեպի իր սեփական ուժերը, դեպի իր դասակարգի ուժը, ընդունակութիւնը՝ կոլեկտիւի ողնութեամբ դուրս դալու հարթ ճանապարհը, դալթի հեռեմն են քչում հավատն դեպի տեր աստված և վերջիվերջո վերացնում են այն: Իսկ յերբ հավատացյալն դուրս է իր ուժը, ալ ժամանակ նա իր հույսը չի գնում հրաշագործ միջամտութեան վրա, ալ ժամանակ նա չի աղոթում, ալ գործում է,—ալ ժամանակ նա ողնում չի ծխում, ցքի հարեցողութեամբ չի տարվում. Վառվառե մեծ նահատակութեւ սուրբ պատկերի առաջը չի տաքանում:

Կրոնը ողնում է, բայց իրելով ողնում է նա ծառայում այն մարդկանց համար, վորոնք անջատված են իրենց դասակարգից, կոլեկտիւից, վորոնք կորցրել են հավատը դեպի իրենց անձը և չեն հասկանում կյանքի սրենքները:

Մեր անելիքն է — ամբողջ ուժերով պայքարել

թույնի դեմ, լինի նա նյութական կամ հոգեվոր թույն:

Մենք լարված պայքար ենք ծավալում աշխհո-
ւիզմի դեմ, և մեր հնգամյակում արդյունաբերութեան
միակ հետամնաց ճյուղը սպիրտի և զարեջրի արդյու-
նաբերությունն է: Մենք թույլ չենք տալիս, վոր մեր
յերկրում մյուս մեծ չարիքը տարածվի՝ ոսկում ծխելը:
Մենք չենք ուղում, վոր աշխատավոր մասսաները թու-
նավորեն իրենց զիտակցությունը կրոն—ոսկումով,
կրոն—ցըրով:

Մենք գիտենք, վոր հարբեցողութեան, ոսկումծխե-
լու և աղութի մեջ հավատացյալ հարբեցողները, ծը-
խողները վորոշ կարծեցյալ հանգստություն են զգում և
համենայն դեպս—ծանրությունների մոռացություն:
Հավատացյալներն ասում են, վոր դրա մեջն է կրոնի
արժեքը և թե պետք է պահպանել կրոնը: Մենք վճռա-
պես դեմ ենք դուրս գալիս այդպիսի հայացքի:

«Հանգստությունը» սոսկ ինքնախաբուծյուն է,
իսկ ծանրությունները մոռացությունը միայն վնաս-
աւար է:

Մենք յերբեք չպետք է մոռանանք, վոր անհրաժեշտ
է հետեւողական պայքար մղել մինչեւ վերջը—մինչեւ
սոցիալիզմի լիակատար հաղթանակը: Կոմունիստական
կուսակցությունը միշտ կոչ է արել պայքարելու դժու-
րությունների դեմ, այլ վոչ թե մոռացութեան տալու
նրանց:

Աղոթքի մեջ հավատացյալ աշխատավորը ինքն
իրեն մոռացալ: Բայց ստացա՞ւ նա արդեօք դեթ վորեւե
թեթեւություն աղոթքից: Վո՛չ, և վո՛չ մի: Ընդհակա-
ռակը, նրա վիճակը նույնիսկ վատթարացալ և մեր ըն-
թերցողը այժմ իսկ կտեսնի, վոր իրոք այդպես է:

Ահա թուլակամ մարդը ծանր խոհերից վաղեց ողե-

տուն և հարեց: Նա թեթեւություն զղաց, նա մոռա-
ցալ իր դժվարությունները: Բայց ախր մի քանի ժամից
հետո նա կզգաստանա, դժվարություններն ելի նույնն
են, հոգսերը նորից անհանդատացնում են նրա դիտակ-
ցությունը, բայց խմած մարդը հարբեցողութեան պատ-
ճառով ե՛լ ավելի վատ վիճակի մեջ է գտնվում: Հար-
բեցողութեամբ նա քայքայեց իր ուժերը, իր նյարդային
համակարգությունը, թուլացրեց իր կամքը: Ողետանք
նա խնկու տվեց, թերևս, իր վերջին փոփոխությունը:
Վո՛չ, ողու մեջ մոռացություն վորոնք կորած բան է:

Մի քանի ժամ ինքզ մեզ կմոռանաս, բայց դրա վո-
խարեն շատ օրերով և ամիսներով կվատթարացնես ջո
դրությունը: Բայց այդ բանում ամենալիաճախարհ աչն
է, վոր նա՝ հարբեցողը անպետք մարտիկ է դառնում
դատակարգի շարքերում, վոր ամենավտանգավոր մո-
մենտներում նա անձնատուր կլինի:

Այդ՝ դժվարություններից դուրս գալու յեւք չէ,
այլ ընդհակառակը—ամենախեղճական վակուդի և վիճա-
կի վատթարացում: Մենք չենք կարող հավանություն
տալ նաև ոսկում ծխելուն:

Ծիշտ է, վոր ոսկումից մի առանձին վիճակի մեջ
ես ընկնում և հաճելի յերազներ ես տեսնում: Բայց ախր
այդ յերազներն ել ինչ վոր մեկ ժամվա կամ մի քանի
սակալ ժամերի ընթացքումն ես տեսնում, մինչդեռ
կյանքդ ավելի լավ չի դառնում, իսկ առողջությունդ
քայքայվում է ընդմիշտ, յեթե ժամանակին կանգ չառ-
նես և չսկսես հիմնովին բժշկվել:

Աղոթքը հավատացյալ մարդուն վորոշ սփոփանք
և հանգստություն է բերում, սակայն միայն շատ կարճ
ժամանակով, իսկ ողուտ և ողետություն—և վոչ մի,
դրա վոխարեն հավատացյալ մարդը ավելի ուժեղ

ճնշվածութիւնն և զգուժ, վորովհետեւ վոչ մի ոգնութիւնն չի տեսնում աստծուց, իսկ չե՞ վոր նրա վրա մեծ հույս եր դրել:

Փոխանակ սեփական ջանքերով և խորհրդային պետութեան, իր կոլեկտիվի, գիտութեան և այլն ոգնութեամբ ակտիվորեն, ուժերի լիակատար լարումով, պլանավաչափորեն, կազմակերպված ձևով պայքարելու նոր աշխարհի համար, հավատացյալ մարդը ծունկի յե դալիս և աղոթում է:

Վոր աղոթքը չի վերացնում դժվարութիւնները, այդ արդեն խոստովանում են այժմ նույնիսկ շատ հավատացյալներ, բայց վոր աղոթքը հեռացնում է թշնամու դեմ պայքար մղելուց կամ իր իսկ դասակարգային յեղբայրներին դեմ պայքարի յե դրդում, — այդ բանը դեռևս աստծուն աղոթող միլիոնավոր մարդկանց գիտակցութեան դեռ չի հասել: Նրանք դեռ չեն գիտակցել, վոր կրօնը միացնում է աշխատավոր հավատացյալներին իրենց դասակարգային յեղբայր թշնամու հետ, վոր հավատացյալ աշխատավորները առանց հաշիվ տալու իրենց այդ բանում, կրօնի միջոցով առանձին դեպքերում դառնում են կուլակային կամքի կատարողներ:

Աշխարհում հրաչքներ չեն լինում: Մեր կյանքը կախված է բնութեան և հասարակութեան որոշումներից: Այդ որոշումները, իրենց հերթին, փոփոխվում են՝ կախումն ունենալով նաև մեր սեփական գործունեությունից: Յեթե կա մեկը, վոր կարող է վերացնել կամ մեղմացնել զանազան դժվարութիւնները, այդ միայն մենք ինքներս ենք: «Վոչ աստված վոչ թաղավորը և վոչ հերոս»... Միայն մեր սեփական ձեռքով կհասնենք մենք ազատագրութեան: Յեւ անհրաժեշտ է հասկանալ այդ բանը, այդ մտքով պետք է տոգորվել:

Պետք է հասկանալ, վոր մեր հիմնական դժվարութիւնները մեր աճման հետեւանքն են, վոր սոցիալիստական շինարարութեան պրոցեսում նրանք արագորեն հաղթահարվում են, վոր սոցիալիստական ինդուստրացումը, կոլեկտիվացումը և կուլակի վերացումը՝ վորպես դասակարգի, խորհրդային առողջապահութիւնը, կուլտուրական հեղափոխութիւնը մահաբեր հարվածներ են հասցնում մեքենաների, ապրանքների պակասութեան, աշխատանքի ցածր արտադրողականութեան, ցածր բերքատվութեան, անդրադիտութեան և այլն:

Կուլակային շահագործութիւնից աղատութիւն մի ուղտի բաստվածամայրերից և քրիստոս-լիբիլներից, այլ աշակցութիւն վորոնի արհմիութեան մեջ, դյուդխորհրդում, կոոպերացիայում, փոխոգնութեան ընկերութեան մեջ և այլն. պրոլետարիատի և նրա բայչե-վիկների կուտակցութեան զեկավարութեամբ կազմակերպված ձեւով պայքարի կուլակի դեմ, կորոնտեսութիւն մտիւր և համատարած կոլեկտիվացման հիման վրա վոչնչացրու կուլակութիւնը՝ վորպես դասակարգի:

Յեթե վնասատուները հարձակում դործեցին այդուդ վրա, ժամանակ մի կորցնիր, պայքարի քիմիկամ միջոցներ ձեռք բեր և սրսկի քո խնձորենիները և բալենիները:

Յեթե դու հիվանդացար, մի դանդաղիր և վաղիր բժշկի մոտ:

Աղոթքը հետ է քաշում գործից, հետ է քաշում պայքարից:

Յերբ մարերիւր թուչում է, չի կարելի և վոչ մի բուպե կորցնել և պետք է հավաքի յենթարկել ուժերը խանդակներ վորեկու համար: Այն ժամանակ մորեն

ավելի պակաս չափով վնասներ կհասցնի: Իսկ յեթե գյուղացիները յեկեղեցի վաղեն և մաղթանքի համար թանգազին ժամեր կորցնեն, այդ դեպքում մօրեխն ամբողջ հացը կլստի:

Այս ամենը այնպե՛ս հասկանալի չէ, մինչդեռ հավատացյալները վոչ միչտ լիակատար հաշիվ են տալիս իրենց այն բանում, թե ինչպե՞ս վնասակար ե տղոթքների մեջ սկստիանք վորոնելը:

ԽՍՀՄ-ում, վորտեղ բանվոր դասակարգի ձեռքին ե գտնվում իշխանութունը, տարեց-տարի աճում ե աշխատավորների ամենալայն մասսաների նյութական մակարդակը: Այդ վերելքը հնարավոր ե միայն աշխատանքով—համառ, հմտորեն տարվող, սլանաչափ աշխատանքով սոցիալիստական շինարարության ուղինների վրա: Բարձրացնել կարելի չէ այն միայն աշխատավորների միասնական ջանքերով, տեխնիկային տիրելով: Մեր սլայմաններում, պրոլետարիատի դեկտատուրայի ժամանակ մեքենան, հողը, բնդերքի հարստությունները, գիտությունը արդեն ծառայում են վոչ թե շահագործողներին, այլ աշխատավորներին: Մեքենաներ շինել սովորել և մեքենաներ կառավարել, սլաքարտանյութեր արտադրել և ճշտորեն կիրարկել նւրանց, բարելավել անասունները, ածուխի, նավթի, հանքերի, շինարարական նյութերի հանքախավեր հետախուզել, դյուրատնտեսական նոր կուլտուրաներ գտնել և հնարել և այլն—ահա թե ինչը չտեսնված չափով կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը, չեղած բարձրության կհասցնի կյանքի մակարդակը և ահա թե ինչի դեմ են սլայքարում կրոնն ու տերտերականությունը:

Մարքոն ու Լենինը, բայլչեվիկներն ամբողջ կու-

սակցությունը միչտ ել կրոնի դեմ են դուրս յեկել լիակատար վճռականությամբ:

Վո՛չ մի դիջում կրոնին:

Վո՛չ մի հուսադրություն հերոսների, ցարերի և աստվածների վրա:

Վո՛չ մի ինքնամոռացություն ուղիումի, ողու, աղոթքի մեջ:

Բոլոր աշխատավորների համերաշխ աշխատանքով պրոլետարիատի և նրա կուսակցության ղեկավարությամբ հաջողվեց վերականգնել արդյունաբերությունը և մինչսլատերաղմյան ժամանակի համեմատությամբ կրկնապատկել նրա արտադրանքը: Բայց չե՞ վոր արդյունաբերությունը տարեց-տարի քայքայվում եր իմպերիալիստական և ասլաքաղաքացիական պատերաղմի ընթացքում: 1914 թվականից սկսած մինչև 1920 թվականը արդյունաբերությունը սարից ցած եր դրնվում և 1921 թվականին նա յերկրին հինգ անգամ ավելի պակաս բան տվեց, քան 1913 թվականին: Անցավ 8 տարի և նա արտադրեց արդեն յերկու անգամ ավելի, քան մինչսլատերաղմյան տարում:

Այս ե, վոր հսկայական քայլ չե դեպի վեր:

Իսկ տրանսլորալ: Ախր 1920 թվականին դնացքները չվացուցակի համաձայն չեյին մեկնում, ասողջ չողեկառքեր և վաղոններ չառ քիչ եյին, բեռնաշրջանառությունը չնչին քանակով եր արտահայտվում: 1914 թվականից սկսած մինչև 1920 թվականը արանսլորտը իմպերիալիստական և քաղաքացիական պատերաղմի սլայմաններում քարուքանդ եր լինում, իսկ 1921--1929 թվականներին մեղ հաջողվեց վորտի կանգնեցնել այն: Այժմ մենք բարձրացնում ենք արանսլորտի աշխատանքը նոր, ավելի բարձր աստիճանի:

Միքանի տարվա ընթացքում մենք կառուցինք ճյուղավորված կոոպերացիա :

Գյուղատնտեսական մեքենաներ և տրակտորներ պատրաստող արդյունաբերությունը այնպիսի արագությամբ է աճում, վոր կոլտնտեսությունները կարող են վատահ լինել, թե արագորեն կմեքենայացվեն տարբեր աշխատանքները :

Համառ աշխատանքի շատ տարիներն ապացույցներն ԽՍՀՄ-ի աշխատավորներին, թե կարող են նրանք վերականգնել աշխարհն իրենց սեփական ձեռքերով և այն ել պատմական ամենակարճ ժամկետում :

Փանի՝ քանի մարդիկ աղանդավորների փրած ցանցերն ընկան, — ընկան միայն այն պատճառով, վոր այդ մարդիկ գործադրկությունից իրենց անելանելի դրություն մեջ էլին զգում : Սխր այն գործազուրկը, վոր յերկար ժամանակի ընթացքում աշխատանք չի ունենում, իրոք վոր ծանր դրություն մեջ է ընկնում : Նա հնազանդ ալելի հաճախ իրենում ճնշված, անողնական արարած է տեսնում և յեթե նա կրոնասեր է, այդ դեպքում սովորականից ալելի հաճախ է աղերսանքներով դիմում աստծուն :

Սոցիալիստական շինարարությունը իր դարդաման ընթացքում գործադրկությունը վերացրեց արդյունաբերական բանվորների մեջ : Պրոլետարիատն իր սեփական ձեռքերով ծավալեց արդյունաբերական շինարարությունը և դրանով ել վերջ դրեց գործադրկության և դուք մտածեցեք միայն, թե մարդկանց վոր պիտի բաղմություն մշտական աշխատանք ստացավ գործարաններում և վաղվա համար դողալուց դադարեց, դադարեց ծանր հառաչելուց : Բայց չե՞ վոր կրոնը ճնշված արարածի հառաչանքն է :

1931 թվականի վերջին ԽՍՀՄ դյուղացիական տնտեսությունների կեսից վոչ պակասը միացած կլինի կոլտնտեսություններում : Կոլտնտեսություններում աշխատանքի տրտադրողականությունն ալելի բարձր է, քան անհատական միջակային տնտեսություններում :

Կոլտնտեսություններում հնազանդ ալելի լայնորեն են ոգտագործվում մեքենաներ, տրակտոր, կոմբայն :

Կոլտնտեսություններ ստեղծելով և կոմբայնի դործարաններ կառուցելով և դյուղատնտեսությունը մեքենաներով դիմելով, մենք դրանով ել դյուղացնում ենք հողագործական աշխատանքը, բարձրացնում նրա արտադրողականությունը : Ինչպե՞ս է նշովում այն հնձվորն իր աշխատանքը, վորը յերեկոյան դեմ արդեն անընդունակ է իր մեջքը շտկելու : Ինչպե՞ս ծանր է քաղվորների, չղթայով աշխատող աշխատավորների աշխատանքը և այլն : Ինչպե՞ս են անիծում նրանք սեղոնային ուրերում իրենց ծանր աշխատանքը և ամբողջ կյանքը : Ի՞նչ աստիճանի անսիրտ է թվում այդպիսի աշխարհը : Կոլեկտիվացումը և մեքենայացումը հնադհնա ալելի յեն թեթեացնում դյուղատնտեսական աշխատանքը :

Բայց բանը միայն մեքենաները չեն : Կապիտալիստական յերկրներում մեքենաները շատ լայնորեն են կիրարկվում, աշխատավորների կյանքը անասմանորեն ծանր է, վորովհետեւ մեքենան կապիտալիստների ձեռքերում չահագործության է ծառայում և բանվորին մեքենայի դերին է դարձնում : Իսկ ԽՍՀՄ-ում նա ծառայում է մեղ, բանվորներին և բոլոր աշխատավորներին : Յեւ մեքենայի տերը հանդիսանում է վոչ թե մեկուսացած բանվորը, վոչ թե անհատական չքավորը

կամ միջակը, այլ այն բոլոր աշխատավորները, վորոնք խոշոր վաշտերով են կազմակերպված: Փարբիկաներում, խորհանտեսություններում, կոլտնտեսություններում: Միայն պրոլետարիատի դիկտատուրան և սոցիալիզմն են ապահովում կոլեկտիվ ստեղծադործությունը հոգուտ նույնինքն հասարակության և այդ կոլեկտիվ ստեղծադործությունը հասարակական հարբուտության աղբյուրները հզոր և առատ ե դարձնում:

Կրոնը անսխալ աշխարհի հոգին է: Մեր սեփական ձեռքերովն, ուրեմն, աշխարհը սրտառատ դարձնենք, ինչպիսին հենց հանդիսանում ե այն աշխարհը, վոր մենք ենք կառուցում: Իսկ յերբ աշխարհը սրտառատ ե, այն ժամանակ կարիք չկա մոռացության, ձգտում չկա ուրիշ ծխելու մեջ, աղոթքների մեջ ինքնամոռացության տալ իրեն—«Տո՛ւր մեզ, տե՛ր», «Ոգնի՛ր, տե՛ր աստված»:

Կրոնը ուրիշում ե, կրոնը ինքնամոռացության միջոց ե, կրոնը հոգեջեռուլ ե, կրոնը այն մարդու ինքնազգացումն ե, վորը կորցրել ե հավատը իր ույթերի և իր դասակարգի ույթերի վրա:

Աստված յերբեք չի ամել և չի տա, վորովհետև աստված միայն լքված և չգտած հավատացյալ մարդկանց յերեվակայության մեջ դոյություն ունի: Միայն մենք ինքներս իենինի կուսակցության դեկավարությամբ տապալեցինք շահագործողների արխայիտությունը և արմատախիլ ենք անում վերջին շահագործական դասակարգը—կուլակությունը, վերակառուցում ենք տնտեսությունը սոցիալիստական սկզբունքներով, բարձրացնում ենք աշխատավորների միլիոնավոր մասաների կյանքի մակարդակը: Միայն մենք ինքներս, լավ հակահարված տալով աջ թեքմանը և

«ձախ» խոտորիչներին, կուլակի դեմ լարված պայքար մղելով՝ սոցիալիստական հասարակություն ենք կառուցում առանց կուլակների և նեպոմանների, ինչպես վոր մենք արդեն ստեղծեցինք ԽՍՀՄ առանց բանկիրների, կալվածատերերի և դեմստվոյի պետերի:

Միայն մենք ինքներս, մեր կապերը խզելով կրոնի, տերաբների և աղանդավորական քարոզիչներին հետ, կոլեկտիվ կյանք ենք ստեղծում, մեքենայացված արտադրությամբ, դյուրին աշխատանքով, բարձր արտադրողականությամբ,—միայն մենք ինքներս դիտության հետ սերտ դաշինք կնքելով կառնակենք ծառայել մեզ և՛ շողուն, և՛ ելեկտրականությանը, և՛ քիմիայի հզոր ույթերին:

Վոչ թե աղոթել, վոչ թե ինչպիսի «միլիտիստ» վորոնել ասածու մեջ, այլ ընդհանրապես—ավելի սեղմ կերպով միացնել շարքերը, անխնայորեն դուրս չարթալ մեր շարքերից բոլոր կուլակներին և յենթակուլակներին, վոչ մի ակնթարթ չմոռանալով, վոր քանի դոյություն ունեն դասակարգերը, անխուսափելի յենաև դասակարգային պայքարը: Ասածու վրա հույս չդնել, այլ հարվածել լքումը և լքվողներին, հարվածել մարմաջողներին և պանիկյորներին, հարվածել ուսյորաունիստներին, վորոնք խանդարում են հնգամյակի, ինդուստրացման, կոլեկտիվացման և կուլակությանը՝ վորպես դասակարգի, վերացման հանդիք տալու գործումը:

Աշխատավորները չպետք ե աղոթքով ջեռուցեն—տաքացեն—իրենդ հոգին, այլ սեփական ձեռքերով կազմակերպված կերպով քարածուխ, վառելավառ, տորֆ, նավթ պատրաստեն, այսինքն՝ խեղական նյութական վառելիք:

Գործադրկություն արդեն չկա ԽՍՀՄ-ում :

Վոչ թե աղոթքով, այլ ինդուստրացումով և կոլեկտիվացումով ելինք մենք սլաքարում գործադրկության դեմ և հաղթահարեցինք այն :

Հացի պակասությանը մենք յեկեղեցական միջոցներով վերջ չտվինք, վոչ ել տերտերներ և աղանդավորներ ղեկավարությամբ, այլ կոմունիստական կուսակցության ղրոջների տակ, վորը ասաց, թե միակ յեղը խորհտեսությունների և կոլտեսությունների մեջն է :

1928-29 թվականին հացը պակաս էր, 1929-30 թվականին բավականին հաց կա :

Այժմ կուսակցությունը միլիոնավոր աշխատավորների առաջնորդում է դեպի մարա՝ կաթի, յուղի, մսի համար :

Արդեն հարյուրավոր անասնաբուծական խորհարդանտեսություններ են ծավալված . արդեն ստեղծված և նորից ստեղծվում են անասնաբուծական կոլտեսություններ : Կուսակցության լենինյան ղեկավարությամբ պրոլետարիատը կրուծի մսի և կաթի խնդիրներն աշխպես, ինչպես լուծեց հացի խնդիրը : Դրա յերաշխիքն այն փաստն է, վոր չքավորներն ու միջակները պրոլետարիատի հետեւից են դնում, կոլտեսություններ են կառուցում :

Ազգութով չե՛, վոր մենք դուրս ենք կորցում մեզ աղքատությանից, կեղտից, կիսազրազրիտությանից, գիշակեր-կուլակի գրկից : Կրոնն ասում է, վոր պետք է ձգտել լավագույն կյանքի յերկնքում, այլ վոչ թե յերկրի վրա և թե՛ պետք է հաշտվիլ աղքատության, կեղտի, հալածակիչների հետ :

Ազգութով չե, այլ կոլեկտիվացումով և, վոր մենք

քնդարձակում ենք մեր ցանքերը, բարձրացնում բերքատվությունը, բարձրացնում կովերի կիթը :

Իսկ կոլեկտիվացումը նշանակում է մահ՝ կուլակների դասակարգին, մահ՝ շահագործման :

Պետք է պայքարել կուսակցական դիրեկտիվները կյանքում կիրառելու համար :

Այժմ կոլեկտիվացած է բոլոր գյուղացիական տն-րի մեկ յերրորդից ավելին, իսկ հնգամյակի յերրորդ տարվա ընթացքում պետք է կոլտեսությունների մեջը ներգրավել մոտավորապես բոլոր չքավորական և միջակային տնտեսությունների կեսը :

Պետք է կռվել արդֆինպլանի համար :

Արդյունաբերությունն իր զարգացման մեջ իր հետեւիցն է տանում գյուղատնտեսությունը : Արդյունաբերությունը խորհտեսություններին և կոլտեսություններին տալիս է տասնյակ հազարավոր տրակտորներ, հարյուր հազարավոր մեքենաներ և գործիքներ, ավելի և ավելի մեծ քանակությամբ քիմիական պարարտանյութեր : 1931 թվականի համար արդյունաբերությունը հսկայական առաջադրություն ստացավ : Նա մեկ ու կես անգամ մեծացնելու յե իր արտադրությունը : Աշխատավորների նոր միլիոններ ելեկտրական և ներդիայի տեսքով ելեկտրատարներով կվազեն զանազան ուղղություններով : Նոր տասնյակ խոշոր գործարաններ գործի կդրվեն : Նոր միլիոնավոր տոնն բամբակ, վուշ, կանեփի մանածի և գործվածքի կվերածվեն :

Խորհտեսություններն ու կոլտեսությունները արդեն 1930 թվականին սաստիկ աճած քանակությամբ բամբակ, ճակնդեղ և հումքի այլ տեսակներ տվին, — այդ բանը հնարավորություն է տալիս ել ավելի ծավա-

լել այն արդյունաբերութիւնը, վոր լայն սպասման առարկաներ եւ արտադրում:

Միայն այդպես:

Միայն սեփական ձեռքերով:

Միայն կազմակերպված և պլանաչափ:

Միայն կապերը խզելով կրօնի և տերտերներէ հետ:

Միայն մի կողմը շարտելով այն բոլորին, ովքեր պանիկա յեն տարածում, ովքեր տրտունջ են բարձրացնում և հեծկլտում են:

Միայն հետեւողական անխնա պայքարով դատակարգային թշնամու դեմ, միայն կուլակին՝ վորպես դատակարգի, վերացնելու քաղաքականութիւնը անհողդդդ տանելով համատարած կորեկտիվացման բաղադրի վրա:

Միայն անողորձ պայքարով ամեն տեսակի աջ ու «ձախ» ուղիւնիւտներէ դեմ:

Միայն հեղափոխական սրբոյնտարիատի, նրա անվանգարդի և մարտական շտաբի—կենինի կուտակցութեան ղեկավարութեամբ:

Միայն սոցիալիստական շինարարութեան ուղիով:

Միայն այդպես և յերեւել այլ կերպ, աշխատավոր մասնաները ստաջլա անսիրտ աշխարհը կվերածեն սրտառատ աշխարհի:

Միայն այդպես կարելի յե կերտել կյանքը առանց ճնշված արարածների, վորոնք կորցնելով իրենց ինքնափստահութիւնը, շարունակ դիմում են դեպի աստվածները և աշխատում են աղօթքներով քնուկքնել իրենց հողին:

Աշխարհն ինքնըստինքյան վուչ բարի յե և վուչ չար: Եւհաղործողներն են այն անսիրտ դորձրել: Դա-

րերով գոլդացու վզին են նստել կալվածատերերը, սղնակահանները, ճորտատերերը: Յերկար տանամայակներով բանվորներից միլիոնավոր շահույթ են քամել գործարանատերերը, բանկիրները, կուլակները:

Այդ բոլոր դիշատիչներն իրենց շահագործումը պաշտպանում եյին պետական ադարատի ամբողջ հզորութեամբ:

Միլիոնավոր աշխատավորներին թվում եր, թե ծանր կացութիւնից դուրս գալու յեղ չկա, թե այդպես ել իբրեւ ճնշված արարած պետք ե մեռնեն և նրանք յեկեղեցի եյին քնում, կանթեղներ վստում իրենց սենեկիկներում, ծանր կերպով հառաչում եյին և այդ հառաչանքները աղօթքներ եյին:

Բայց այժմ ԽՍՀՄ-ում կապիտալիստների և կալվածատերերի ձեռքերից իշխանութիւնը դուրս ե կորգված:

Այժմ մե'ր իշխանութիւնն ե:

Այժմ պետական ադարատի ամբողջ հզորութիւնը սրբոյնտարիատն ոգտադրծում ե սոցիալիստական շինարարութեան համար:

Այժմ մենք վերացնում ենք կուլակութիւնը համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Կյանքը ավելի թեթեւ ե դարձել այն կյանքի համեմատութեամբ, վոր կար մինչև հեղափոխութիւնը:

Կյանքը հետզհետեւ ավելի ու ավելի խնդալից ե դառնում:

Դադարներ, ուրեմն, աղօթելուց, ոպիտմ ծխելուց և ողի լմեղուց, այլ մեր աշխատանքը բաղմապատկենք դատակարգային պայքարի և սոցիալիստական շինարարութեան ճակատում, ջանանք ամբողջ ու-

Ժերով ամբաստնել յերկրի սրաշտպանունակությունը և
թույլ չտանք ինտերվենտներին կանգնեցնելու մեզ դե-
պի լիակատար սոցիալիզմը տանող ճանապարհին :

Հարվածաշնության և սոցիալիստական մրցման ա-
վելի լա՛յն ճակատ :

Ե՛լ ավելի ինքնագործունեյություն, նախաձեռնու-
թյուն, գյուտարարություն :

Տիրապետեցե՛ք տեխնիկային և նրան դրեք աշխա-
տանքորենրի ծառայությանը :

Առա՛ջ՝ սոցիալիստական շինարարության ճանա-
պարհով ՀամԿ(Բ)Կ դրոշի տակ :

—————



537

ԳԻՆԸ 10 ԿՈՊ. (1¹/₄ ռ.)1
2540

ՎԼ. ՏԱՐԱԲՅԱՆՈՎ

РЕЛИГИЯ—ОПИУМ

Госиздат ССР Армении
Эривань—1981